ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան.

Ի պատասխան Ձեր 29.05.2019թ. հ.01/262 գրության՝ տեղեկացվում է, որ Իսակովի պողոտայի հ.4/3 հասցեում՝ առանց համապատասխան թույլտվության, քարե պարսպի կառուցման շինարարական աշխատանքներ իրականացնելու փաստի կապակցությամբ, Երևանի քաղաքապետարանի կողմից, դեռևս 07.12.2012թ. կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ հ.009571 արձանագրությունը և Երևանի քաղաքապետի 15.01.2013թ. հ.Վ-1/2 որոշմամբ «Առա-Ռոս» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Համբարձումյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Տեղեկացվում է նաև, որ Իսակովի պողոտայի հ.3/8 հասցեում՝ առանց համապատասխան թույլտվության, գոյություն ունեցող խանութի վերակառուցման փաստի առնչությամբ 02.11.2017թ. կազմվել է հ.026933 արձանագրությունը, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանի 22.11.2017թ. հ.Վ-44/7 որոշմամբ քաղաքացի Սուսաննա Սիմոնյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ